

ԿԱՐԾԻՔ

ԼԻԼՅԱ ՄՈՒՇԵՂԻ ՊԱՐՍԵՂՅԱՆԻ «Կովկասյան գյուրգայի թույնի և խնկածաղկի եթերայուղի համակցված պատրաստուկի հակացավային եվ հակաբորբոքային ազդեցությունների հետազոտություն» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Ցավը հանդիսանում է լուրջ առողջապահական հիմնախնդիր ամբողջ աշխարհում:

Այն հանդիսանում է օրգանիզմում ընթացող տարբեր պաթոլոգիկ վիճակների վերաբերյալ նախազգուշացնող ազդանշան: Ցավը մարդու յուրահաստուկ հոգեվիճակ է, որը որոշվում է կենտրոնական նյարդային համակարգի մի շարք ֆիզիոլոգիական պրոցեսներով, որոնք առաջանում են ուժեղ գրգռիչով: Ցավը հոգեսոցիալական երևույթ է, որը խախտում է մարդու սովորական կենսակերպը և կապված է տհաճ սուբյեկտիվ զգացմունքների հետ: Ցավի ավանդական օրգանը, այսպես կոչված, նոսիցեստոր նեյրոններն են, որոնք արձագանքում են վնասակար և պոտենցիալ վտանգավոր գրգռիչներին՝ «հնարավոր սպառնալիքի» ազդանշաններ ուղարկելով ողնուղեղին և ուղեղին:

Այսօր գոյություն ունեն բազմաթիվ ցավազրկող դեղամիջոցներ, որոնք լայնորեն կիրառվում են կլինիկական պրակտիկայում:

Բնական ռեսուրսները հակացավային և հակաբորբոքային դեղամիջոցների ստեղծման հիմնական նախանյութերն են: Հականոցիցեստիկ դեղամիջոցների հնարավոր թեկնածուի որոնումները հանգեցրել են էթնոբուսական ռեսուրսների և ֆաունայի տարբեր ներկայացուցիչների թույների սկրինինգի: Օրինակ՝ կանաբինոիդները հիմնականում ստացվում են հնդկական կանեփից, մորֆինը՝ քնաբեր կակաչից, իսկ սալիցիլաթթուն՝ ասպիրինի նախանյութը, ուռենազգիների կեղևից: Նոցիցեստիկ և հականոցիցեստիկ համակարգերի փոխազդեցության և դրանց վրա տարբեր էկզոգեն ցավազրկող միջոցների ազդեցության ուսումնասիրման համար վերջին ժամանակներս ակտիվորեն կիրառվում են նաև կենդանական թույներ: Հայտնի է, որ սուբլետալ չափաբաժնի կիրառման դեպքում շատ կոբրաների թույներ ցուցաբերում են ցավազրկող ազդեցություն:

Պարսեղյանը հետազոտություններն իրականացրել է սեռահասուն ալբինոս առնետների (200±20գ) և մկների (20±2գ) վրա:

Ատենախոսը հետազոտությունների ընթացքում կիրառել է՝

- **5 տեսակի կորբաների թույներ** (Naja naja oxiana-NNO, Naja naja pallida-NNP, Naja naja kaouthia-NNK, Naja naja nigricincta-NNN, Ophiophagus Hannah-OH):

Հետազոտության համար աշխատանքում կիրառվել են նաև՝

- **Հայկական խնկածաղկի եթերայուղ (OVEO).**
- **Քիմիական նյութեր.** λ-կարագինան, DMSO, Tween 80, SR144528 և նալաքսոն.
- **Ստանդարտ դեղամիջոցներ.** Մորֆին, Անալգին, Դիկլոֆենակ, դիկլոֆենակ քսուկ

Հետազոտությունների ընթացքում կրառվել են միշարք թեստեր ,այդ թվում՝

1. **Ֆորմալինային թեստ,** որը թույլ է տալիս գնահատել սուր և բորբոքային ցավը.

Կենդանիներին հետևի ձախ թաթիկից IPL ներարկվում է 0,02մլ 1-5%-ոց ֆորմալին և անմիջապես գրանցվում է թաթիկի կծել/լիզելու վարքագիծը՝ 45 րոպեների ընթացքում:

2. **Տաք թիթեղի թեստ,** որը թույլ է տալիս որոշել կենդանիների ջերմադիմացկունության շեմային մեծությունը

3. **Կարագինանային թեստ,** որը կրծողների մոտ թաթերի այտուցի գրանցման տարածված մեթոդ է, in vivo բորբոքումը գնահատելու համար՝ ի պատասխան տարբեր գրգռիչների: λ-կարագինանի 1%-անոց լուծույթը (50 μl) ներարկվում է կենդանու հետևի թաթիկի մեջ (IPL):

4. **GC-MS հետազոտություն.** իրականացվել է գազային քրոմատոգրաֆիայի (GC) վերլուծություն. GC-ն համալրված է եղել Hewlett–Packard 5972 սերիայի զանգվածային սպեկտրոմետրիայի (MS) դետեկտորով:

5. **Տոքսիկոլոգիական հետազոտություններ.** Բերենսի մեթոդով հետազոտվող լուծույթի ի LD₅₀-ի որոշման համար կազմվել է ենթափորձային կենդանիների 5 խումբ, յուրաքանչ-յուրում 6-ական կենդանի:

6. **Բաց դաշտի թեստ.** Կենդանիները մեկական (ստուգիչ և փորձարարական խմբերի) տեղափոխվել են բաց դաշտ սարքի մեջ 60 րոպեով: Կենդանու շարժողական ակտիվությունը գրանցվել է ավտոմատացված ծրագրի միջոցով (Ethovision XT v5.1; Noldus Technologies):

Հակաբորբոքային դեղերը ազդում են ամբողջ մարմնի վրա՝ անկախ ընդունման ձևից: Ազդեցության մեխանիզմը կապված է / Ցիկլօքսիգենազ /COX 1 և COX 2 ֆերմենտի արգելափակման և բորբոքային արձագանքի նվազեցման հետ: Ցիկլօքսիգենազների դեղաբանական արգելակումը նվազեցնում է բորբոքման և ցավի ախտանիշները / ինչպես օրինակ ասպիրինը, իբուպրոֆենը և այլն/:

Թույլ տվեք չանդրադառնալ արդյունքների քննարկմանը, քանի որ այն բավարար լուսաբանվեց ատենախոսի կողմից: Միայն կնշեմ, որ Լիլյա Պարսեդյանի կողմից կատարվել է մեծածավալ գիտական աշխատանք և ստացվել են հետաքրքիր տվյալներ առ այն, որ հինգ տարբեր կորբանների և կովկասյան գյուրգայի ինտակտ և արգելափակված ֆերմենտային ակտիվությամբ թույլները և այլ կիրառված հակաբորբոքային նյութերը ունեն արտահայտված հակացավային ազդեցություն: Աշխատանքում տեղ են գտել որոշ տեխնիկական և շարադրական թերությունների, որոնք սակայն շտկելի են և չեն նսեմացնում կատարված աշխատանքը: Ավելին, կարծում եմ գրական ակնարկը շատ ընդարձակ է և անհրաժեշտ է այն մասամբ կրճատել:

Հայտնի է, որ դորսալ եղջյուրի ցավազգայուն նեյրոնները միջին գծով ելքեր են ուղարկում դեպի կոնտրալատերալ ողնուղեղ, որտեղ նրանց մանրաթելերը կազմում են վերընթաց սպինոթալամիկ տրակտը: Մինչ թալամուս հասնելը տրակտը էլուստներ է ուղարկում, հատկապես *Nucleus of the solitary tract*, որը կարգավորում է ցավի հետ կապված ռեֆլեքսային տախիկարդիան; *Caudal ventrolateral medulla*, որը նաև կարգավորում է սրտանոթային արձագանքը ցավին; *Periaqueductal grey matter*, որը ցավազրկողների գործողության կենտրոնական վայրերից մեկն է, և որը կարգավորում է ցավի ազդանշանների նվազող արգելակումը; *Lateral parabrachial area*, որն այնուհետև միանում է հիպոթալամուսին և ամիգդալային ցավին ինտեգրելու հուզական և աֆեկտիվ արձագանքը; և վերջապես *Թալամուսը*, որը տարածականորեն քարտեզագրում է ցավի զգացողությունը և, հավանաբար, պատասխանատու է ցավի որոշ աֆեկտիվ արձագանքների համար:

Ամփոփելով վերը նշվածը, հարկ է նշել, որ օգտագործելով ոչ միայն կեցվածքային, այլև համարժեք փորձարարական էլեկտրաֆիզիոլոգիական, մորֆոլոգիական և հիստոքիմիական

